

ծանր լիզում է: Վերը բերած օրինակից երևում է այդ. բերենք ուրիշները.

«Երբ հարթ և ընդարձակ տարածութեան մէջ՝ ծովի թէ ցամաքի վրայ՝ շուրջ ենք դիտում մեր տեսողութիւնը սահմանափակում է մի բոլորագծով, կամ ուրիշ խօսքով՝ մեզ թուում է թէ կանգնած մենք բոլորակի կենտրոնում, որի ծայրերին կը պած է երկնակամարը: Ահա այն բոլորագիծը, որով սահմանափակում է մեր տեսողութիւնը, կամ որով երկինքն ու երկիրը միանում են կոչւում է հորիզոն» (էջ 5—6):

«Եթէ բարձր ափերը շատ կարծր են լինում օրինակ՝ գըրանիտեայ, այն ժամանակ ջուրը՝ հետզհետէ ճեղքելով նրանց ներս է մտնում և նեղ ու երկայն ծոցեր ձևացնում, որոնք նաւարկութեան համար շատ անյարմար են լինում որովհետեւ՝ բացի նեղ լինելուց՝ նոցա յատակում լցուած են լինում ժայռուած ափերից թափթփուած սրածայր քարեր, որոնք հեշտութեամբ ծակում են այնտեղից անցնող նաւերը»:

Այս 3—5 բժինոց նախաղասութիւնները պիտի կարդան առաջին դասատան աշակերտները, հասկանան և իրանց խօսքը որով պատմեն ուսուցչին!||

### ՅԱԿ. ՅՈՎՀ.

Պ. Փափագեան՝ «Լուր-դա-լուր», քրդական պոէմա, Բագու, 1903 թ., գիրն է 3 կոպէկ:

Հուր-դա-լուրը՝ հասարակ, բայց սիրուն աւանդութիւն մըն է: Հովիւ Հասօն՝ «Երկրի սիրուն և բաջ պատանին» կը տեսնէ օր մը իր աղային մէկ հատիկ աղջիկը՝ Զալիսէն ու կը սիրահարուի: Մէրը՝ հաւասարապէս երկուքին ալ սրտին մէջ բոյն կը դնէ: Հասօն՝ իր նախկին աշխուժութիւնն ու զուարթութիւնը կը կորցնէ, ու կու գայ յաճախ թափառիլ սիրականը բանտարկուած պալատին առաջ: Հասօն՝ սրինդ ածել շատ լաւ գիտէ: Ու այդ միամիտ սիրահարը՝ հովւական սերենադներ կու տայ Զալիկին համար:

Խորամանկ աղան բանը կ'իմանայ: Կը բարկանայ, կը կատղի, բայց կը վճռէ ամեն ինչ խոհեմութեամբ կարգադրել: Կը կանչէ հովւին իր մօտ:

«Գիտեմ, Հասօ, ասաց չար աղան—գիտեմ, որ սիրում ես իմ աղջկան: Դու քաջ տղայ ես. լսել եմ լաւ սրինդ էլ ածում ես: Աղջիկս քեզ կը տամ, միայն կը դնեմ մի պայման: Լսել

եմ որ ոչխարները քեզ հնազանդում են ու սրնգիդ ձայնից գրաւուած քեզ մօտ գալիս են: Գետնից մինչև այդ բարձր աշտարակը—տեսնում են նրան—զնել կը տամ փայտեայ սանդուխտը. դու կը նստես այնտեղ—բարձրում. ոչխարներդ կը ժողովւեն ցածրում: Ահա պայմանը՝ թթէ դու բարձրից, սրինդ ածելով, կարողացար ոչխարներին սանդուխտի վրայով քեզ մօտ վեր հանել, այն ժամանակ աղջիկս քեզ հալալ, առ ու վայելիր: Ապա թէ ոչ խայտառակ եղիր, ինչ ունես-չունես հաւաքիր և քանի շուտ է այս կողմերից հեռացիր: Մի չորան՝ աղայի փեսայ չի լինիլ—այդ էլ խելքիցդ հանիր:

Աղան իր բանը գիտէ: Սանդուղի ճիշտ մէջտեղի աստիճաններէն մէկը աղան կոտրեց այնպէս, որ յայտնի չերեայ: Ոչխարները սրնգի ձայնով սկսան բարձրանալ սանդուղի աստիճաններէն. առաջնորդող այծը հասաւ թակարդին. «զգաց որ մահը առջևն է, բայց դիւթուած էր—ոտքը դրեց փայտի վրայ. փայտը շարժուեց. լսուեց մի մայիւն և սիրուն այծը պտոյտ գործելով օդի մէջ, գնաց ջախջախուելու անդունդի բարերի վրայ»:

Հասօն յուսահատեցաւ, բայց Զախլէին նայելով սրինգը դարձեալ ձեռք առաւ: Առաջին ոչխարն ընկաւ, հետևեցան երկրորդը երրորդը: Միւսները սկսան ետ գնալ: «կատաղեց Հասօն—բացուածքը չէր տեսնում. որչափ սէր ունէր ու զգացմունք, ներշնչեց սրնգին. գեղգեղանքներով վարացրեց բնութիւնը... բայց ոչխարները ետ ետ էին գնում»:

Հասօն սկսաւ ածել Լուր-դա-լուրը՝ «երգերի փառքը», «հրեշտակների մրմունջը», «Հասօփ ոդինն»: Ոչխարները անդիմադրելի շարժուամով մը առաջ նետուեցան ու շատերը գլորուեցան: Հասօն ծոեցաւ և բացուածքը տեսաւ... երգը լոեց, յետոյ «երկու մարմիններ արագ պտոյտ գործելով օդի մէջ, գընացին միասին, ջախջախուելու անդունդի խորքերում... և միմիանց գրկում: Հասօն և Զախլէն էին դրանք»...

Բացի մէկ քանի արատներէ, «Լուր-դա-լուր»-ը յաջող է:

## ԶԱԼԷՆ

Յովակիմ Սոլովեանի «Հարազաւ Պահեր». Ա.-Պետերովք 1903 թ. գինն է 15 կոպէկ.

Պ. Յովակիմ Սոլովեանը, եթէ հրապարակախօսութիւնը իրեն ասպարէզ ընտրած ըլլար, գուցէ յաջողէր միջակ հրապա-